ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍՈՒՋՅԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն


*I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2*

*II. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....3*

*Ա. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ .....3*

*Բ. ԹՎԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ .....5*

*Գ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ .....6*

*Դ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ.....8*

*Ե. ՀԵՏԱՎԱՐՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ .....9*

*Զ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....11*

*Է. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ.....12*

*Ը. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....13*

*Թ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ..14*

## Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության համակարգը կազմող դատական իշխանության, դատախազության և նախաքննության մարմինների անկախ և արդյունավետ գործունեությունը, այդ համակարգի նկատմամբ լայն հանրային վստահությունը, ի թիվս այլնի, անմիջականորեն պայմանավորված են դատավորների, դատախազների, քննիչների և արդարադատության համակարգի այլ դերակատարների մասնագիտական գիտելիքներով, գործնական հմտություններով, կարողություններով ու էթիկական որակներով, իսկ դրանց ձևավորման և շարունակական զարգացման գործընթացում առանցքային դերակատարներից է Արդարադատության ակադեմիան (այսուհետ՝ նաև Ակադեմիա): Արդարադատության ոլորտում կրթության վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերը (մասնավորապես՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 4 (2003) կարծիք, Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի թիվ 9 (2014) կարծիք, Եվրոպային խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)12 և թիվ Rec(2000)19 հանձնարարականներ և այլն) արդարադատության համակարգի դերակատարների որակյալ նախնական և շարունակական ուսուցումը դիտարկում են որպես նրանց անկախության, անկողմնակալության, արդյունավետ գործունեության և հանրային վստահության ամրապնդման նախապայման՝ շեշտադրելով այդ ուսուցումը կազմակերպող մարմնի առանձնահատուկ դերակատարումը: Հետևաբար, Արդարադատության ակադեմիայի ինստիտուցիոնալ հզորացումը, կրթական ներուժի և կարողությունների զարգացումը պետք է դիտարկվի որպես արդարադատության համակարգի բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը:

Ուստի, Ակադեմիայի ռեկտոր ընտրվելու դեպքում առաջիկա հինգ տարիներին իմ գործունեության նպատակն է լինելու առկա հենքի վրա Արդարադատության ակադեմիան դարձնել արդարադատության համակարգի կարիքներին և ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող, տարածաշրջանում առաջատար դիրք զբաղեցնող կրթական ու հետազոտական

կենտրոն: Այս նպատակի իրացման համար առաջարկվում են հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

## II. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Ա. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

Ա.1. Մասնագիտական ուսուցման և վերապատրաստման ծրագրերը (այսուհետ՝ նաև Ուսուցման ծրագրեր) պետք է պարբերաբար վերանայվեն այն առումով, որ տեսական բովանդակությունը սերտորեն փոխկապակցվի գործնական հմտությունների ու կարողությունների ձևավորման ու զարգացման կարիքների հետ: Այս ուղղությունը ենթադրում է՝

ա) ոչ միայն գիտելիքահեն, այլ նաև գործնական հմտությունների ու կարողությունների (իրավավերլուծական հմտություններ, գրավոր և բանավոր խոսքի բարձր մշակույթ, ապացույցների գնահատման և փաստական հանգամանքների վերլուծության կարողություններ և այլն) զարգացմանն ուղղված կրթական մոդելի ներդրում, այդ թվում՝

- դատական նիստերի, ինչպես նաև դատավարական տարբեր գործողությունների մոդելավորում՝ իրական գործերից (անձնական տվյալները պաշտպանված) վերցված նյութերի հիման վրա, դերերի հստակ բաշխմամբ: Անհրաժեշտ է դիտարկել դատախաղերի տեսաձայնագրման հնարավորությունը՝ հետագայում դրանք քննարկելու, մասնակիցների արձագանքը ստանալու, ինչպես նաև ապագայում որպես ուսումնական նյութ օգտագործելու համար: Դատախաղերին հոգեբանի ներգրավումը հնարավորություն կընձեռնի կենտրոնանալ ոչ միայն իրավական գիտելիքների ու հմտությունների վրա, այլ նաև գնահատել կողմերի հետ հաղորդակցման, սթրեսի կառավարման և այլ ոչ մասնագիտական ունակությունները.
- Էթիկական պահվածքի գործնական օրինակների վերլուծություն.

գ) շահառուների կարիքներով պայմանավորված՝ Ուսուցման ծրագրերում ներառված դասընթացների շրջանակի պարբերական վերանայում,

դ) ոչ միայն մասնագիտական, այլ նաև առկա միջառարկայական դասընթացների շրջանակի ընդլայնում (ներառյալ՝ թվային տեխնոլոգիաներ և արհեստական բանականության գործիքներ, թվային գրագիտություն, էլեկտրոնային շտեմարանների և տվյալների հետ աշխատանք և այլն),

ե) կարճաժամկետ և թիրախային կրթական մոդուլների մշակում, որոնց շրջանակում անհրաժեշտ է դիտարկել հատուկ դասընթացներով խառը խմբերով ուսուցման կամ վերապատրաստման մոդելի ներդրման հարցը, ընդ որում՝ ոչ միայն ըստ մասնագիտական գերատեսչությունների, այլ նաև ոչ իրավաբան մասնագետների (օրինակ՝ առողջապահական, ֆինանսական, բանկային և այլ ոլորտի ներկայացուցիչներ) հետ համատեղ, ում գործունեությունը սահմանակցում է դատական և իրավապահ ոլորտի հետ,

զ) անհրաժեշտ է ապահովել դատական դեպարտամենտում հայեցողական պաշտոնների անվանացանկում ներառված պաշտոն զբաղեցնող անձանց, Դատական դեպարտամետնում հայեցողական պաշտոնների անվանացանկում չներառված պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների, Դատախազությունում հայեցողական պաշտոնների անվանացանկում ներառված պաշտոն զբաղեցնող անձանց, Քննչական կոմիտեում, Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոնների անվանացանկում ներառված պաշտոն զբաղեցնող անձանց, քաղաքացիական ծառայողների համար Ակադեմիայում վերապատրաստման ծրագրերի մշակում (այս առումով աննհրաժեշտ է նաև օրենսդրական լրացումներ կատարել «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքում):

## Բ. ԹՎԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Բ.1. Հիբրիդային ուսուցման մոդելի հետագա զարգացման նպատակով անհրաժեշտ է ձևավորել դասախոսների և ունկնդիրների համար անհատական օգտահաշիվներով առցանց ուսուցման հարթակ (e-learning)՝ տեսական նյութի զգալի մասը առցանց մատուցմամբ, իսկ գործնականը՝ լսարանային ժամերի, մոդելային դատավարությունների և փորձաշրջանային ձևաչափով: Այս նպատակով ձևավորվող առցանց ուսուցման հարթակը կպարունակի մասնակիցների, ակտիվ դասընթացների շրջանակը, յուրաքանչյուր դասընթացի համար անհրաժեշտ տեսական և պրակտիկ նյութերը, տեսադասախոսություններ, թեստեր և գործնական առաջադրանքներ: Դասախոս-ունկնդիր արդյունավետ փոխգործակցության ապահովման նպատակով հարթակը կընձեռի նաև հետադարձ կապի հնարավորություններ: Հարթակի միջոցով հնարավոր կլինի իրականացնել նաև դասախոսի և դասընթացի գնահատում:

Բ.2. Ուսուցման և վերապատրաստման գործընթացի թվայնացման նպատակով անհրաժեշտ է ներդնել անձնական թվային փաթեթ/պորտֆոլիո, որը յուրաքանչյուր ունկնդրի համար կներառի իր ուսուցման կամ վերապատրաստման գործընթացին առնչվող անհրաժեշտ տեղեկությունները, այդ թվում՝

- հասանելի դասընթացների ցանկը.
- անցած դասընթացների, հանձնած քննությունների և ստացած գնահատականների ամբողջական պատկերը.
- մոդելային դատավարություններին մասնակցության տեսաձայնագրությունները.
- հետադարձ կապի տվյալները:

## Գ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Գ.1. Միջազգային համագործակցության խորացման և Ակադեմիայի գործունեության հետագա միջազգայնացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Ակադեմիայում գործող՝ համագործակցության և հանրային կապերի բաժնի կարողությունները զարգացնելու համար՝ այն դարձնելով կառուցվածքային ստորաբաժանում, որի նպատակն է լինելու՝

- ընդլայնել ու խորացնել Ակադեմիայի գործընկերային ցանցը, այդ թվում՝ համագործակցության հուշագրերի առկա շրջանակը համալրել նորերով՝ կապ հաստատելով եվրոպական այլ մասնագիտացված կառույցների հետ (օրինակ՝ Ֆրանսիայի, Բելգիայի, Նիդերլանդների).
- Ակադեմիան ճանաչելի դարձնել որպես տարածաշրջանային հարթակ՝ գործուն քայլեր ձեռնարկելով Եվրոպական դատական ուսուցման ցանցի (European Judicial Training Network) անդամ դառնալու ուղղությամբ, որը միավորում է Եվրոպական Միության բոլոր անդամ պետությունների դատական դպրոցները և իրականացնում է ինչպես նախնական, այնպես էլ շարունակական վերապատրաստման ու փոխանակման ծրագրեր.
- ապահովել Ակադեմիայի շարունակական արդյունավետ մասնակցությունը Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության, Միավորված ազգերի կազմակերպության, Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի և այլ միջազգային կառույցների՝ արդարադատության ոլորտի ծրագրերին.
- մշակել արտասահմանյան գործընկերների հետ համատեղ Ուսուցման ծրագրեր, ներդնել կարճաժամկետ դասընթացներ, որոնցում ներգրավված կլինեն

օտարերկրյա դատավորներ, դատախազներ, քննիչներ, գիտակրթական ոլորտի ներակայացուցիչներ.

➢ գործարկել առցանց դասախոսությունների և վեբինարների շարք՝ արտասահմանյան գործընկերների մասնակցությամբ.

➢ ներգրավել միջազգային փորձագետների՝ կրթական գործընթացի բարելավման, առաջադեմ փորձի ներդրման և հնարավոր օրենսդրական բարեփոխումների մշակման համար, ինչպես նաև միջազգային ծրագերին և դրամաշնորհներին արդյունավետ մասնակցության գործնական հմտությունների փոխանցման համար:

Գ.2. Փորձի փոխանակման և լավագույն փորձի ներդրման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել փոխանակման և ուսուցողական ծրագրեր, որոնց միջոցով՝

ա) Ակադեմիայի, շահառու մարմինների ու դասախոսական կազմի ներկայացուցիչները կկարողանան կարճաժամկետ ուսումնական այցեր կատարել օտարերկրյա գործընկեր հաստատություններ՝ վերջիններիս գործունեությանը ծանոթանալու համար,

բ) դատավորները, դատախազներն ու քննիչները հնարավորության կունենան մասնակցել ստաժավորման ծրագրերի օտարերկրյա դատարաններում, դատախազություններում և նախաքննական մարմիններում՝ հնարավորություն ունենանալով տեղում ծանոթանալ արտասահմանյան գործընկերների աշխատանքին և լավագույն փորձը ներմուծել ներպետական իրավական համակարգ:

Գ.3. Վերոնշյալ ուղղությունների իրագործման,. ինչպես նաև ակադեմիայի գործունեության ֆինանսավորման համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցների ներգրավման համար անհրաժեշտ է ակտիվ քայլեր ձեռնարկել միջազգային նախագծերին և դրամաշնորհային ծրագրերին մասնակցության համար, այդ թվում՝ մշակել ուսուցման և շարունակական վերապատրաստման արդի թեմաներով, ինչպես

նաև նորարական ուսուցման մեթոդների (օրինակ՝ վերը նշված e-learning հարթակի) ներդրման նոր նախագծեր:

Գ.4. Ակադեմիայի Ուսուցման ծրագրերի՝ ոլորտի միջազգային չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դրանք պարբերաբար արտաքին փորձագիտական գնահատման ենթարկելու համար՝ հնարավոր բարեփոխումների առաջարկություններ ստանալու և զարգացման ուղիները մատնանշելու համար:

Հայեցակարգային այս ուղղության նպատակը Արդարադատության ակադեմիան միջազգային մասնագիտական համայնքի ակտիվ անդամ դարձնելը և արդարադատության ոլորտում կրթության լավագույն միջազգային մշակույթին միանալն է, ինչը որպես հնարավոր արդյունք կհանգեցնի արտաքին ռեսուրսների ներգարվման:

## Դ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Դ.1. Անհրաժեշտ է Ակադեմիայի կազմում ստեղծել հետազոտական և վերլուծական կենտրոն, որի գործունեության հիմնական ուղղությունները շահագրգիռ մարմինների հետ ամենօրյա համագործակցության ռեժիմով կլինեն՝

- դատական և իրավապահ համակարգի խնդիրների վերլուծությունը և կարիքների գանահատումը.
- Ակադեմիայի ծրագրերի արդյունավետության գնահատումը.
- ռազմավարական զարգացման ծրագրի և վերլուծական փաստաթղթերի նախագծերի մշակումը.

Հետազոտական կենտրոնի գործունեության արդյունքները պարտադիր կընդգրկվեն Կառավարման խորհրդի օրակարգերում, ուղղակիորեն կօգտագործվեն Ակադեմիայի Ուսուցման ծրագրերի բովանդակությունը թարմացնելու համար, կդառնան արդարադատության ոլորտում կրթության ռազմավարական պլանավորման և բարեփոխումների նախապատրաստման տեղեկատվական հիմք:

## Ե. ՀԵՏԱՎԱՐՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Ե.1. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Արդարադատության ակադեմիան իրավագիտության՝ որպես կարգավորվող մասնագիտության համար հետավարտական լրացուցիչ ուսուցման ազգային կենտրոն դարձնելու համար:

«Բարձրագույն կրթության մասնագիտությունների և դրանց դասիչների (ներառյալ կարգավորվող մասնագիտությունների վերաբերյալ հատուկ նշումը) դրանց համապատասխան տրվող որակավորումների և համապատասխանության ցանկերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման և կից հավելվածի՝ շրջանառվող նախագծի համաձայն[1]՝ իրավագիտությունը ներառվելու է կարգավորվող մասնագիտությունների ցանկում, իսկ նշված որոշման հիմնավորման համաձայն՝ կարգավորվող են այն մասնագիտությունները, որոնց ուղղությամբ ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու համար բարձրագույն իրավական կրթության որակավորումը բավարար չէ, և պահանջվում է հետավարտական լրացուցիչ ուսուցում՝ տվյալ մասնագիտական ուղղությանը հատուկ մասնագիտացված տեսական գիտելիքներով, գործնական հմտություններով և կարողություններով՝ համապատասխան հետավարտական ուսումնառության միջոցով:

Որոշման նախագիծն ընդունվելու պարագայում Արդարադատության ակադեմիայի գործունեության ընդլայնման հնարավոր ուղղություն կարող է լինել հետավարտական ուսումնառության կազմակերպումը, քանի որ Արդարադատության ակադեմիան իր մանդատով և գործառույթներով կարող է ապահովել գործնական հմտությունների և կարողությունների փոխանցումը: Այս ուղղության հաջող ներդրման պարագայում անհրաժեշտ կլինի՝

[1] Հասանելի է հետևյալ հղմամբ https://www.e-draft.am/projects/9845/justification

ա) մշակել հետավարտական կրթական հատուկ ծրագրեր՝ խորացնելու մասնագիտական տեսական գիտելիքները և զարգացնելու գործնական հմտություններն ու կարողությունները,

բ) շահառու մարմինների հետ համատեղ, աշխատաշուկայի պահանջներին համահունչ, մշակել մասնագիտական չափորոշիչներ,

գ) զարգացնել համագործակցությունն իրավաբանական բուհերի հետ՝ կրթական ծրագրերի բովանդակության մշակման գործում՝ տարանջատելով բուհական և հետավարտական փուլում ձևավորվող կրթական վերջնարդյունքները,

դ) Ակադեմիայի հետազոտական կենտրոնի կողմից շահագրգիռ մարմինների հետ ակտիվ համագործակցության շրջանակում աշխատաշուկայում առկա պահանջարկի վերաբերյալ կազմել տարեկան վերլուծություն, որը, ի թիվս այլնի, կներառի թափուր պաշտոնների քանակը, անհրաժեշտ մասնագիտացումները և այլն: Վերլուծության արդյունքները հիմք կծառայեն Ակադեմիայում ընդունելության գործընթացի կազմակերպման, հետավարտական ուսումնառության կրթական ծրագրերի պարբերական վերանայման, ինչպես նաև շահագրգիռ մարմինների կողմից իրենց քաղաքականության պլանավորման համար,

ե) ձևավորել հետավարտական կրթության արդյունքների էլեկտրոնային ռեեստր, ինչը թույլ կտա ապահովել հետավարտական ուսուցման թափանցիկ և վերահսկելի համակարգ, բարձրացնել կադրային քաղաքականության տվյալահենքությունը, օգնել երիտասարդ կադրերին աշխատանքի տեղավորման հարցում, ինչպես նաև ձևավորել թափուր աշխատատեղերի համալրման ճկուն ընթացակարգեր:

Այս հայեցակարգային ուղղությունը թույլ կտա Ակադեմիան դարձնել իրավաբանական կրթությունը և պրակտիկան կապող օղակ:

## Զ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ.

Զ.1. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Ակադեմիայի կարողությունների հզորացման, մասնավորապես պրոֆեսորադասախոսական լավագույն ներուժի ներգրավման նպատակով, այդ թվում՝

ա) ապահովել դասախոսների ընտրության չափանիշները (մասնագիտական փորձ, գիտական գործունեություն, հաղորդակցական հմտություններ, նոր մեթոդների կիրառման հմտություններ),

բ) գործնականում հետևողականորեն կիրառել դասախոսների և դասընթացի գնահատման համակարգը՝ հիմնված կրթական մոդուլների բովանդակության և կիրառած մեթոդների արդյունավետության վերաբերյալ ունկնդիրների և շահառուների տրամադրած անանուն հետադարձ կապի արդյունքների վրա: Գնահատման արդյունքների հիման վրա պետք է սահմանել լրացուցիչ խթաններ (միանվագ պարգևատրումներ, միջազգային վերապատրաստումների և մասնագիտական այցերի առաջնահերթ իրավունք և այլն) այն դասախոսների համար, ովքեր մշակում են նոր ուսումնական մոդուլներ, ձեռնարկներ և մեթոդական նյութեր, ներգրավվում են միջազգային ծրագրերում և ներկայացնում Ակադեմիան արտերկրում,

գ) բարելավել դասավանդման պայմանները, ապահովել արտասահմանյան գրադարաններին հասանելիություն, որպեսզի դասավանդման գործընթացը դառնա մասնագիտական զարգացման գրավիչ հարթակ, այլ ոչ թե երկրորդական ծանրաբեռնվածություն,

դ) շարունակական քայլեր ձեռնարկել դասախոսների համար միջազգային փոխանակման և վերապատրաստման ծրագրերին մասնակցության ապահովման նպատակով,

ե) մշակել լավագույն մասնագետների ներգրավմանն ուղղված հետևողական քաղաքականություն՝ դատական, դատախազական, նախաքննական,

ակադեմիական և մասնագիտական ոլորտի այլ առաջատար մասնագետների դասախոսական կազմում ներգրավելու համար,

զ) ներդնել մրցունակ վարձատրության համակարգ այն հաշվով, որ Ակադեմիայում դասավանդումը ֆինանսապես համադրելի լինի բարձր որակավորում ունեցող մասնագետի հիմնական զբաղվածության այլընտրանքների հետ:

## Է. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Է.1. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, ի լրումն պետական բյուջեից ֆինանսավորման, լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար, այդ թվում՝

ա) մշակել և ներկայացնել ոլորտային միջազգային ծրագրերին և դրամաշնորհներին մասնակցության հայտեր: Ընդ որում, այս գործընթացի հաջողությունը մեծապես կախված է Ակադեմիայում գործող՝ համագործակցության և հանրային կապերի բաժնի կարողություններից: Ուստի, անհրաժեշտ է զարգացնել միջազգային դրամաշնորհների գնահատման չափանիշներին համապատասխան նախագծերի կազմման և հիմնավորման հմտությունները, ապահովել անգլերեն լեզվի կիրառման բարձր մակարդակ՝ թե՛ դիմումների, թե՛ հաշվետվությունների և միջանկյալ փաստաթղթերի պատրաստման ընթացքում՝ կոնկրետ ստորաբաժանման աշխատակիցների համար: Այս կարողությունների հետևողական զարգացումը հնարավորություն կտա, որ Արդարադատության ակադեմիան դառնա մրցունակ և վստահելի գործընկեր միջազգային կազմակերպությունների ու դոնորների համար, ապահովի դրական արդյունքներ միջազգային դրամաշնորհային մրցույթներին մասնակցելիս,

բ) օրենքով նախատեսված ուսուցման և վերապատրաստման ծրագրերից զատ կազմակերպել վճարովի հիմունքներով թիրախային վերապատրաստումներ,

գ) իրականացնել վճարովի հիմունքներով վերլուծական հետազոտություններ և տրամադրել խորհրդատվական կարծիքներ. այս ուղղության շրջանակում

Ակադեմիայի հետազոտական և վերլուծական կենտրոնը պետք է հնարավորություն ունենա իրականացնել վճարովի ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ արդարադատության և հարակից ոլորտների բարեփոխումների, տվյալահենք քաղաքականության ձևավորման, դատական և իրավապահ համակարգերի կարիքների գնահատման և այլ թեմաներով,

դ) խթանել Ակադեմիայի գիտամեթոդական գործունեությունը և գործնական քայլեր ձեռնարկել ուսումնական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների և այլ նյութերի պատրաստման և հրատարակման ուղղությամբ՝ համադրելով դրամաշնորհային ֆինանսավորումը և վաճառքից ստացվող եկամուտները,

ե) քայլեր ձեռնարկել «Բանբեր. Արդարադատության ակադեմիայի» գիտական պարբերականը միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում Վեբ օֆ Սայնս (Web of Science) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ներառելու համար:

Է.2. Լրացուցիչ ֆինանսական միջոցներն անհրաժեշտ է ուղղել նաև Ակադեմիայի աշխատակազմի սոցիալական երաշխիքների բարելավմանը:

Է.3. Ենթակառուցվածքների բարելավման նպատակով պետք է շարունակաբար քայլեր ձեռնարկել լսարանների տեխնիկական վերազինման, էլեկտրոնային գրադարանների հասանելիության ընդլայնման, սիմուլյացիոն սենյակների, առցանց դասավանդման ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ:

## Ը. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ը.1. Ակադեմիայի գործունեության իրավական հիմքերի հստակեցման համար անհրաժեշտ է Կառավարման խորհրդի հետ քննարկել և նախանշել առաջարկվող հայեցակարգային ուղղությունները կյանքի կոչելու համար «Արդարդատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխությունների և

լրացումների օրենսդրական փաթեթ մշակելու, ինչպես նաև Օրենքը օրենսդրական տեխնիկայի պահանջներին համապատասխանեցնելու, Ակադեմիայի կանոնադրության և օրենքի միջև առկա հակասությունները վերացնելու հարցերը:

## Թ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ.

Թ.1. Գործունեության հստակ տեսլական ունենալու, տվյալահենք քաղաքականություն վարելու, թափանցիկ, մասնակցային, հաշվետու կառավարման մշակույթ ունենալու, կրթության որակի, թվայնացման, միջազգային համագործակցության և հետազոտական գործունեության ուղղություններով չափելի արդյունքներ ապահովելու համար անհրաժեշտ է Կառավարման խորհրդի հետ հաձայնեցված մշակել արդարադատության ակադեմիայի հնգամյա զարգացման ռազմավարական ծրագիր՝ գործողություն-ժամանակացույց-պատասխանատու մարմին-ակնկալվող արդյունք ձևաչափով: